# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2022թ. փետրվարի 10-ին, N 75-Ա

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 12-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2022 թվականի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

X

VERIFIED OCSP 11.02.2022 10:53:25 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2022 թվական

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 25 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

(համապատասխան պետական կառավարման մարմնի անվանումը)

| h/h | Աշխատանքի անվանումը | Աշխատանքի տեսակը | Աշխատանքի նպատակը | Աշխատանքի գնահատման չափանիշը | Աշխատանքի արդյունքը | Ժամկետ<br>ԿԻՍԸ<br>I կիսամ. | II կիսամ. | պլան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Մարզպետարանի 2021 թվականի աշխատանքային ծրագրի կատարման վերլուծություն և 2023 թվականի աշխատանքային ծրագրի կազմում | նպատակային | Մարզպետարանի 2021 թվականի կատարված աշխատանքների ամփոփում, վերլուծություն, 2023 թվականին իրականացվելիք աշխատանքների հստակեցում | 2021 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում մարզպետին, սահմանված ժամկետում աշխատանքային ծրագրի առկայությունը | Տեղեկանք, ծրագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 2 | ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի պատվիրատվությամբ հիմնանորոգվող օբյեկտներում հսկողության իրականացում, ինչպես նաև այլ պատվիրատուների կողմից կատարվող շինարարական աշխատանքների համակարգում՝ այդ թվում ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի քաղաքաշինության կոմիտե բաժնի 1.3 , 9, 17.1 միջոցառումներ | նպատակային | ՀՀ կառավարության համապատասխան որոշումների պահանջների ապահովում, նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացի, ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման, սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում և մարզում առաջնահերթ հիմնախնդիրների լուծման ապահովում | Նախատեսված ծրագրերի փաստաթղթերի ժամանակին կազմում, մրցույթների կազմակերպում, շինարարության իրականացում և վերահսկում | Մարզպետի որոշում, թերությունների ակտ, չափագրություն, մրցութային փաթեթ, գրություն, փորձարկման ակտ, կատարողական ակտ, փաստագրման ակտ | 4 | 4 | 30/12/2022 |
| 3 | Մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքների համակարգում՝ այդ թվում ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի էկոնոմիկայի նախարարություն բաժնի 9.2, 9.3, 9.5, 9.7, 9.8, 9.9, 9.10 միջոցառումներ | նպատակային | Անասնագլխաքանակի անկման մեղմում, վարակիչ հիվանդություններից կենդանիներին զերծ պահում, անասնաբուծության և բուսաբուծության ճյուղերի զարգացման խթանում, պարենային անվտանգության համակարգի զարգացման աշխատանքների ապահովում, անասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովում, կենդանական ծագման հումքի և մթերքի որակի բարելավում, բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում | Իրականացված հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ հանրության իրազեկումը և տվյալների բազայի առկայությունը, բարձր մթերատու և բարձրակիթ մատղաշի գլխաքանակի աճ, կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովում | Տեղեկանք, փաստաթուղթ, գրություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 4 | Պետական տոների, ազգային ծեսերի ու ծիսակատարությունների վերականգման ու տարածման, արվեստների ու արհեստների զարգացման ու խրախուսման զանգվածային միջոցառումների կազմակերպում, պատմական և մշակութային հուշարձանների պահպանության և վերականգնման աշխատանքների աջակցում, հասարակական, կրոնական կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպում, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի ԿԳՄՍ նախարարություն բաժնի 2.3, 50 միջոցառումներ | Նպատակային | Մարզում մատաղ սերնդի ու երիտասարդության գեղագիտական դաստիարակության բարձրացման խթանում, հանրության բոլոր շերտերի համար գրադարանային սպասարկման մատչելիության ապահովում, առարկայական ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդնում, էլեկտրոնային ուսուցման գործիքների զարգացում, «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի, սիրողական սեղանի թենիսի, սիրողական լողի, խճուղավազքի մրցաշարերի անցկացում | Զանգվածային միջոցառումների ծրագրերի առկայություն, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով, ինչպես նաև տարեց մարդկանց՝ տնային պայմաններում, համապատասխան գրականության տրամադրման պայմանների իրազեկում և հասանելիության ապահովում, ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու անընդհատության ապահովում, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, մասսայականացում | Գրություն,տեղեկանք, զեկուցագիր, հաշվետվություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 5 | Մարզում պետական առողջապահական ծրագրերի իրականացում, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի առողջապահության նախարարություն բաժնի 5.7, 23.4, և 26 միջոցառումներ | Նպատակային | ԱԱՊ ռազմավարության, մոր և մանկան առողջության պահպանման իրականացում, տուբերկուլյոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, մալարիայի դեմ պայքարի ազգային ծրագրերի կատարման ապահովում, զորակոչային և նախազորակոչային տարիքի արական սեռի անձանց բժշկական զննման ապահովում, հիվանդանոցային (մասնագիտական) բուժօգնության որակի բարելավում, շտապ օգնության և մանկական հիվանդանոցային ծառայության օպտիմալացման ծրագրերի իրականացում, առողջ ապրելակերպի և ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ տարեկան առնվազն 3 միջոցառման իրականացում, | Ընտանեկան բժշկի սպասարկման ոլորտում բնակչության ընդգրկվածության աճի առկայությունը, մարզում ԱԱՊ բնագավառի բժշկական սպասարկման որակը բնութագրող ցուցանիշների համապատասխանելիությունը գործող չափանիշներին, մանկական մահացության ցուցանիշների նվազում և մայրական մահացության բացառում, մասնագիտական (հիվանդանոցային) բժշկական սպասարկման որակի ցուցանիշների դրական տեղաշարժի առկայությունը, բուժքույրական գործի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների իրականացում | Վերլուծական տեղեկանք, եզրակացություն, առաջարկություն, գրություն | 3 | 3 | 30/12/2022 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | ՀՀ Արագածոտնի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգմանն առնչվող աշխատանքների կազմակերպում՝ այդ թվում ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի ՏԿԵ նախարարություն բաժնի 4.1, 5.3 միջոցառումներ | Նպատակային | Տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև արդյունավետ համագործակցության ապահովում, ՀՀ համայնքների տնտեսական ևսոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված գործընթացի ապահովում | Տեղական ինքնակառավարման մարմիններում ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված վարչական հսկողության 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների անցկացում, ՀՀ վարչապետի 1997 թվականի նոյեմբերի 20-ի N 543 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներից ստացված տեղեկատվության հիման վրա կազմված տեղեկատվական բազայի առկայությունը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը մարզպետին և համապատասխան հանրապետական գործադիր մարմիններ, ոլորտին առնչվող հիմնահարցերի վերաբերյալ մարզպետի մոտ աշխատանքային խորհրդակցությունների արդյունքում ընդունված փաստաթղթերի առկայությունը | Տեղեկանք, գրություն, զեկուցագիր, արձանագրություն, միջնորդագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 7 | ՀՀ Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության իրականացման 2022 թվականի գործունեության ծրագրի կազմում և դրանով նախատեսված միջոցառումների իրականացում՝ այդ թվում ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի /ՏԿԵ նախարարություն բաժնի 107 միջոցառումը | Նպատակային | ՀՀ Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությամբ 2022 թվականի գործունեության ծրագրի կազմում և կատարում, համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման գործընթացի ապահովում | Սահմանված չափանիշներին համապատասխանող, սահմանված ժամկետներում կազմված փաստաթղթերի առկայություն | Տեղեկանք, գործունեության ծրագիր,մոնիթորինգի կիսամյակային և տարեկան հաշվետվություններ | 3 | 3 | 30/12/2022 |
| 8 | Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնում և ագրոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ | Նպատակային | Ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարողների եկամուտների մակարդակի բարձրացում, գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական ուղղվածության տնտեսությունների քանակի ավելացում | Խորհրդատվական կազմակերպությունների ներգրավվում, հանդիպումների, խորհրդատվությունների կազմակերպում, կնքված փոխըմբռնման հուշագիր | Տեղեկանք, ագրոտուրիզմի մեջ ներգրավված անձանց ցուցակ, փոխըմբռնման հուշագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 9 | Ջրահավաքային նախապատրաստության և վարժական հավաքների կազմակերպման հետ կապված աշխատանքների իրականացում | Նպատակային | Ջրահավաքի և վարժական հավաքների կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքներին օժանդակում, աղետներին արագ և արդյունավետ արձագանքում, հավաստի օպերատիվ տեղեկատվության տրամադրում | Ջրահավաքի և վարժական հավաքների արդյունավետ կազմակերպում, հավաստի օպերատիվ տեղեկատվության տրամադրման հնարավորություն, մարդկային կորուստների և տնտեսական վնասների նվազեցում | Որոշման նախագիծ, արձանագրություն, ցուցակ, զեկուցագիր, գրություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 10 | ՀՀ Արագածոտնի մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի ծախսերի կատարման նախահաշիվների կազմման և դրանց ֆինանսավորման գործընթացի իրականացում, աղետի գոտու հիմնախնդիրների կանոնակարգում: «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Նպատակային | ՀՀ Արագածոտնի մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի ֆինանսավորման ապահովում, ծրագրի շահառու ճանաչված, սակայն ծրագրի շրջանակներում բնակարային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարում | ՀՀ Արագածոտնի մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի՝ չափորոշիչներին համապատասխան նախահաշիվների կազմում, կատարված ծախսերին համապատասխան, սահմանված ժամկետում պարտավորությունների գրանցում և ֆինանսավորման իրականացում | Նախահաշիվ, վճարման հանձնարարագիր, գրություն | 4 | 4 | 30/12/2022 |
| 11 | Կրթության և հանրակրթության մասին ՀՀ օրենսդրության, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում | Նպատակային | Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների կողմից ՀՀ օրենսդրության պահանջների ապահովում: | Պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի առկայությունը, սահմանված ժամկետներում դրանց կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության առկայությունը, աշակերտների շարժի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանության բացակայությունը | Գրություն, տեղեկանք, որոշում, տարիֆիկացիա | 2 | 2 | 30/12/2022 |
| 12 | Օլիմպիադաների (առարկայական, մարզական) կազմակերպում, շարադրությունների, մրցույթների, փառատոնների, ցուցահանդեսների,դասընթացների, մարզական,ռազմամարզական միջոցառումների կազմակերպման ապահովում | ընթացիկ | Շնորհալի աշակերտների և առաջավոր ուսուցիչների բացահայտում | Մարզի դպրոցների ներգրավածությունը առարկայական օլիմպիադաներին, հեռավոր գյուղական դպրոցների մասնակցության և նախորդ տարիների նկատմամբ մասնակից օլիմպիականների աճ, առաջավոր խոստումնալից ուսուցիչների ներգրավածությունը, արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության կազմումը, ներկայացումը մարզպետին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Գրություն, արձանագրություն, տեղեկանք, հաշվետվություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 13 | Հաշվետվությունների, միջնորդությունների, տեղեկատվական նյութերի ընդունում և ներկայացում համապատասխան մարմիններ | ընթացիկ | ՀՀ օրենքների, կառավարության որոշումների, ՀԳՄ-ների հանձնարարականների կատարում | Պահանջվող ձևերով և սահմանված ժամկետներում համապատասխան հաշվետվությունների, միջնորդությունների, տեղեկատվական նյութերի կազմումը | Գրություն, տեղեկանք, հաշվետվություն | 4 | 4 | 30/12/2022 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և հայտերի կազմում և 2022 թվականի բյուջետային գործընթացի իրականացում | ընթացիկ | ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 2023-2025 թվականների ռազմավարության հստակեցում, մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի գծով անհրաժեշտ ծախսերի պլանավորում | ՄԺԾԾ մշտապես գործող խորհրդի կողմից մշակված մեթոդական ցուցումներին և կողմնորոշիչ չափաքանակներին համապատասխան, սահմանված ժամկետում մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի հայտերի կազմում և ներկայացում համապատասխան մարմիններ | Ծրագիր, գրություն | 4 | 4 | 30/12/2022 |
| 15 | Գնման գործընթացի իրականացում և համապատասխան ընթացակարգերի ապահովում | ընթացիկ | ՀՀ Արագածոտնի մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի գծով ապրանքների, աուդիտի, այլ ծառայությունների և աշխատանքների նախատեսված ծավալով ձեռքբերում | Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան, սահմանված ժամկետում արձանագրությունների կազմում, տեխնիկական բնութագրերի մշակում, ծառայությունների գնման պետական պայմանագրերի և համաձայնագրերի կնքում և ներկայացում համապատասխան մարմիններ | Պայմանագիր, ընթացակարգի արձանագրություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 16 | Մարզպետարանում, մարզպետարանի ենթակայության կազմակերպություններում և մարզի համայնքներում վարչական և քաղաքաշինական հսկողության, ուսումնասիրությունների և գույքագրման աշխատանքների իրականացում | ընթացիկ | 2022 թվականին ծրագրով նախատեսված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կատարման ապահովում | Հսկողության արդյունքում սահմանված չափանիշներին համապատասխան կատարված ուսումնասիրություններ, թերությունների դեպքում դրանց վերաբերյալ արձանագրությունների առկայություն | Զեկուցագիր, արձանագրություն, գրություն, որոշում, տեղեկանք | 4 | 4 | 30/12/2022 |
| 17 | Մարզի համայնքների կողմից բնակարանային խնդիրների լուծման, տրանսպորտի և այլ ենթակառուցվածքների գործունեության իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգման ապահովում: | ընթացիկ | Ջրամատակարարման, աղբահանության, վարձավճարների հավաքագրման մակարդակի, տրանսպորտային սպասարկման բարելավում | Ջրամատակարարման, աղբահանության, վարձավճարների հավաքագրման, տրանսպորտային սպասարկման վերաբերյալ վերլուծական տեղեկատվության, համապատասխան ոլորտներում նախորդ տարվա համեմատությամբ քանակական և որակական ցուցանիշների դրական տեղաշարժի առկայությունը | Մարզպետի որոշում, գրություն, տեղեկանք, առաջարկություն | 4 | 4 | 30/12/2022 |
| 18 | Ընդերքի օգտագործման, պահպանության և հողի բերրի շերտի օգտագործման վերահսկողության և սանիտարահիգիենիկ նորմերի պահանջների իրականացում | ընթացիկ | Ընդերքի և հողերի պահպանության ապահովում, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում | Ընդերքի և հողերի պահպանության, հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության կազմում, ներկայացում համապատասխան հանրապետական գործադիր մարմիններ, մարզի վարչական տարածքի սահմաններում սանիտարական մաքրման սխեմաների առկայություն | Տեղեկանք, գրություն, զեկուցագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 19 | Մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների գործունեության աջակցության իրականացում՝ Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման կազմակերպում | ընթացիկ | Գյուղատնտեսական կենդանիների անասնագլխաքանակի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին անհրաժեշտ քանակի գարնանացան և աշնանացան սերմերով, պարարտանյութերով, վառելանյութով, թունաքիմիկատներով, պահեստամասերով ապահովում | Գարնանացան և աշնանացան որակյալ սերմերի, անհրաժեշտ քանակի և որակի պարարտանյութերի, վառելանյութի, թունաքիմիկատների և պահեստամասերի պահանջարկի վերաբերյալ սահմանված կարգով հայտերի ներկայացում համապատասխան հանրապետական գործադիր մարմիններին և դրանց ներկրում մարզ | Որոշում, տեղեկանք, փաստաթուղթ, գրություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 20 | Բնապահպանության մասին ՀՀ օրենսդրության կիրարկումն ապահովող միջոցառումների կազմակերպում և օժանդակում | ընթացիկ | Բնապահպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովում մարզի համայնքների, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզում տնտեսվարող սուբյեկտների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից, բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացում, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացում, քարտեզագրման ևկադաստրային իրավունքի վերագրանցման աշխատանքների ապահովում | Բնապահպանության օրենսդրության մասով ՏԻՄ-երի կայացրած օրինական որոշումների առկայություն, օրենսդրությանը հակասող որոշումների նկատմամբ սահմանված կարգով կատարած քայլերի առկայություն, Հստակեցված և պետական գրանցման իրավունքով սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքներ, տեղեկատվության կազմում և ներկայացում ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, | Զեկուցագիր, արձանագրություն, գրություն, որոշում, տեղեկանք | 2 | 2 | 30/12/2022 |
| 21 | Մարզպետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների աշխատանքների կազմակերպման իրականացում | ընթացիկ | Մարզպետարանի ենթակայության ընկերությունների արդյունավետ կառավարման ապահովում | Մարզային առողջապահական 21 ընկերությունների հաստատված վարչակազմակերպական կառուցվածքի, հաստիքացուցակների, ծախսերի նախահաշվների, վճարովի ծառայությունների ցանկի և սակագների առկայությունը | Նախահաշիվ, հաստիքացուցակ, գնացուցակ, վերլուծական տեղեկանք, եզրակացություն, առաջարկություն, որոշում | 2 | 2 | 30/12/2022 |
| 22 | Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության, կենսաթոշակառուների, հաշմանդամների, գործազուրկների, փախստականների հաշվառման և բնակչության այլ խոցելի խմբերի հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների իրականացում | ընթացիկ | Մարզի սոցիալապես անապահով խավերի և խոցելի այլ խմբերի վիճակի բարելավում | Խոցելի խմբերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ներկայացում համապատասխան հանրապետական գործադիր մարմիններ, ըստ սոցիալական խմբերի թարմացված տվյալների բազայի առկայություն | Տեղեկանք, գրություն, զեկուցագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 23 | Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության կիրարկումն ապահովող միջոցառումների կազմակերպում | ընթացիկ | Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարում մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում | Մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նիստերի, մրցույթների և ատեստավորման գործընթացների, համայնքային ծառայության մասով ՏԻՄ-երի կայացրած օրինական որոշումների առկայություն, օրենսդրությանը հակասող որոշումների նկատմամբ սահմանված կարգով կատարված քայլերի առկայություն, սահմանված ժամկետներում և կարգով ՀՀ տարածքային կառավարման ևենթակառուցվածքների նախարարության՝ ոլորտին վերաբերող հանձնարարականներով վերապահված գործառույթների կատարում | Զեկուցագիր, արձանագրություն, գրություն, որոշում, տեղեկանք | 2 | 2 | 30/12/2022 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի գործունեության հետ կապված կազմակերպական աշխատանքների իրականացում, նիստերի և խորհրդակցությունների կազմակերպում և արձանագրում | ընթացիկ | Մարզի խորհրդի և այլ նիստերի ու խորհրդակցությունների բնականոն ընթացքի ապահովում, հանձնարարականների արձանագրում և դրանց կատարման ապահովում | Նիստերի կազմակերպական աշխատանքների պատշաճ իրականացում (մասնակիցների տեղեկացում, նյութերի տրամադրում և այլն), արձանագրությունների արժանահավատություն, հանձնարարականների ճշգրիտ ամրագրում | Արձանագրություն, հաշվառման մատյան, զեկուցագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 25 | ՀՀ Կառավարության, ՀՀ Վարչապետի և Հանրապետական գործադիր մարմինների  հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում | ընթացիկ | Սահմանված ժամկետում հանձնարարականների կատարման ապահովում | Ժամկետանց հանձնարարականների բացառում | Արձանագրություն, փաստաթուղթ, գրություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 26 | Էլեկտրոնային և թղթային փաստաթղթաշրջանառության կազմակերպում և իրականացում | ընթացիկ | Գործավարության կարգի պահանջների կատարման և փաստաթղթերի պահպանության ապահովում | Չգրանցված փաստաթղթերի բացառում, սահմանված ժամկետներում փաստաթղթերի առաքում, <<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան փաստաթղթերի պահպանման առկայություն:  Մարզպետարան ստացված գրությունների սահմանված ժամկետում գրանցում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ | Էլեկտրոնային և թղթային գրանցամատյան, փաստաթուղթ, ակտ, արխիվային գործ,մտից և ելից փաստաթղթեր | 2 | 2 | 30/12/2022 |
| 27 | Քաղաքացիների դիմում-բողոքների քննարկում և քաղաքացիների ընդունելության կազմակերպում | ընթացիկ | Բարձրացված հարցերի լուծումը կամ ընթացք տալը | Բարձրացված հարցերին հիմնավորված և սահմանված ժամկետներում պարզաբանված պատասխանի առկայությունը, դրանց լուծման մասին վերլուծական տեղեկատվության կազմումը և ներկայացումը ՀՀ կառավարություն և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների  նախարարություն | Գրություն, տեղեկանք | 2 | 2 | 30/12/2022 |
| 28 | Մարզպետի և գլխավոր քարտուղարի  կողմից ընդունված իրավական ակտերով, աշխատանքային և գործակարգավարական խորհրդակցություններում տրված հանձնարարականների կատարման վերահսկողության ապահովում | ընթացիկ | Նիստերի և խորհրդակցությունների բնականոն ընթացքի ապահովում, հանձնարարականների արձանագրում և դրանց կատարման ապահովում | Նիստերի կազմակերպական աշխատանքների պատշաճ իրականացում (մասնակիցների տեղեկացում, նյութերի տրամադրում և այլն), արձանագրությունների արժանահավատություն, հանձնարարականների ճշգրիտ ամրագրում | Գրություն, տեղեկանք, զեկուցագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 29 | Մարզպետի որոշումների, գլխավոր քարտուղարի հրամանների,  մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների և ընկերությունների, ՏԻՄ-երի ընդունած իրավական ակտերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցման ապահովում | ընթացիկ | Գրագետ և օրենսդրության համապատասխան փաստաթղթերի կազմում և օրինականության ապահովում | Ընդունված իրավական ակտերի վերաբերյալ համապատասխան հանրապետական գործադիր մարմինների կողմից դիտողությունների բացակայությունը, ՏԻՄ-երի ընդունած իրավական ակտերի՝ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ մարզպետարանի գրավոր առաջարկությունների, դիտողությունների և վերլուծական տեղեկանքների առկայությունը | Եզրակացություն, որոշում, հրաման, գրություն, փաստաթուղթ, արձանագրություն,  տեղեկանք, զեկուցագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 30 | Արտաքին կապերի զարգացման, մարզի տնտեսվարող սուբյեկտներին աջակցության ցուցաբերում արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծման ուղղությամբ | ընթացիկ | Մարզի տնտեսվարող սուբյեկտների համար փոխշահավետ կապերի ստեղծում և համագործակցության ընդլայնում | Հանդիպումների, խորհրդակցությունների կազմակերպում, կնքված փոխըմբռնման հուշագրերի և պայմանագրերի կատարում | Տեղեկանք, գրություն, պայմանագիր, փոխըմբռնման հուշագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 31 | Համայնքների վարչական տարածքների պետական և համայնքային սեփականության հողերի օտարման, օգտագործման, տրամադրման, և դրանց նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման, վարձավճարների գանձման աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացում | ընթացիկ | Համայնքների վարչական տարածքներում ապօրինի հողօգտագործման կանխում, կասեցում, օրենսդրական խախտումներով օտարված հողամասերի վերացում | Սահմանված կարգի խախտմամբ հողօգտագործողների գործունեության բացառում, օգտագործվող հողատարածքների ընդլայնում, նախատեսված վարձավճարների գանձման ապահովում | Տեղեկանք, գրություն, զեկուցագիր, որոշում | 2 | 2 | 30/12/2022 |
| 32 | Համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի նպատակային նշանակության փոփոխության, պետական սեփականության հողերի տնօրինմանն ուղղված գործառույթների իրականացում | ընթացիկ | Ըստ հիմնավորվածության հողերի նպատակային նշանակությունների (կատեգորիաների) փոփոխությունների իրականացման և հետագա գործառույթների ապահովում | Հողերի նպատակային նշանակության փոփոխության մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի նախապատրաստումը, ներկայացումը և համապատասխան որոշումների առկայությունը | Քարտեզ-էսքիզ, հատակագիծ, բացատրագիր, արձանագրություն, առաջարկություն, ՀՀ կառավարության համապատասխան որոշում | 2 | 2 | 30/12/2022 |
| 33 | Համայնքներում հողային պետական տեսչական աշխատանքների իրականացում, մարզի հողային հաշվեկշռի կազմում | ընթացիկ | Համայնքների վարչական տարածքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ օրենսդրության պահանջների խախտման դեպքերի բացահայտում և վերացում | Համայնքներում հողային հարաբերությունների բնագավառում ՀՀ օրենսդրության խախտման դեպքերի բացակայությունը | Մարզպետի որոշում, ժամանակացույց, տեղեկանք, ստուգման ակտ, գրություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 34 | Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված միջոցառումների և նպատակային ծրագրերի իրականացում | ընթացիկ | Մարզում ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանվածությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի կատարման ապահովում | Մշակված ծրագրերի առկայությունը, ծրագրում ընդգրկված թիրախային խմբերի վերաբերյալ տեղեկատվության և առաջարկությունների ներկայացումը մարզպետին և համապատասխան հանրապետական գործադիր մարմիններ | Տեղեկանք, գրություն, եզրակացություն, վկայագիր, զեկուցագիր | 2 | 2 | 30/12/2022 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35 | Անձնակազմի կառավարման հետ կապված աշխատանքների իրականացում | ընթացիկ | Տվյալ պաշտոն զբաղեցնելու համար իրավունքների ու պարտականությունների,մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների մասին պահանջների սահմանում, մրցութային հարցաշարերի մշակում և հանձնաժողովների աշխատանքների բնականոն ընթացքի ապահովում, վերապատրաստման աշխատանքների կազմակերպում, անձնական գործերի վարում | ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան պաշտոնի անձնագրի առկայություն, համաձայնեցման ապահովում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համալրման, վերապատրաստման հետ կապված աշխատանքների իրականացում: Հարցաշարերի մուտքագրում համապատասխան էլեկտրոնային միասնական հարթակում: ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան անձնական գործերի կազմում, այդ թվում՝աշխատանքային գրքույկների վարում և պահպանում, կադրերի ռեգերվի վարում, փորձաշրջանի կազմակերպում, ծառայողական քննության վարում, կադրային բանկի համալրում, տեղեկատվության թարմացում. | Պաշտոնի անձնագիր,մրցութային հանձնաժողովի արձանագրություն, համապատասխան որոշումներ և հրամաններ,վերապատրաստման հայտ | 3 | 3 | 30/12/2022 |
| 36 | Իրավական ակտերի նախագծերի նախապատրասում և ներկայացում | ընթացիկ | Համապատասխան ոլորտներում ծագած խնդիրների, հարաբերությունների կարգավորման նպատակով որոշումների, հրամանների ընդունում | Համապատասխան իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումների և տեղեկանքների առկայությունը և ներկայացումը | Որոշում, հրաման, տեղեկանք, զեկուցագիր | 2 | 2 | 30/12/2022 |
| 37 | Աշխատանքային ծրագրի կազմման և կատարողականների գնահատման գործընթացների իրականացման ապահովում | ընթացիկ | Աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման համակարգում և դրանց ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ օժանդակության ցուցաբերում | ՀՀ կառավարության 2011թ հոկտեմբերի 20-ի թիվ 1510-Ն որոշմամբ սահմանված կարգով աշխատանքային ծրագրի ներկայացում կառավարության աշխատակազմ և գնահատված կատարողականների ներկայացում վարչապետին: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում յուրաքանչյուր աշխատողի հասցեից մուտքագրված և իր անմիջական ղեկավարի կողմից հաստատված աշխատանքային ծրագրերի առկայություն | Աշխատանքային ծրագրեր և գնահատված կատարողականներ | 2 | 2 | 30/12/2022 |
| 38 | ՀՀ Արագածոտնի մարզպետի, մարզպետարանի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում, մարզպետարանի ստորաբաժանումների գործունեության մասին լուրերի, հաղորդագրությունների պատրաստում | ընթացիկ | ՀՀ Արագածոտնի մարզպետի, մարզպետարանի ստորաբաժանումների գործունեության մասին իրազեկման ապահովում, պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակում, մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպազրույցների կազմակերպում, մարզպետարանի ինտերնետային էջի սպասարկում, մարզպետարանում լրագրողների հավատարմագրման գործընթացի կազմակերպում, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարում, մարզպետարանի գործունեության ոլորտներին վերաբերող տեղեկությունների, պարզաբանումների տրամադրում հանրությանը, ցուցանիշների հրապարակում, <<Զանգվածային լրատվության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարում | ԶԼՄ-ով մարզպետարանի գործունեության վերաբերյալ հրապարակված նյութերի առկայությունը, սահմանված ժամկետում տեղեկատվության տրամադրման առկայությունը, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ցանկին համապատասխանություն, ամենամսյա պարբերականություն, մարզպետարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ներգրավում, հանրային կարևորություն ունեցող հարցադրումների ընդգրկում, կայքի բոլոր ենթահամակարգերի ներգրավվածություն, տեղադրվող նյութերի հրատապություն ու կարևորություն, կայքից օգտվողների համար մատչելի ձևակերպումներ, սահմանված կարգին և ժամկետներին համապատասխանություն | Մամլո հաղորդագրություն, հրապարակված տեղեկություններ, տեղեկանքներ ու տեսագրություններ, կայքում տեղադրված նյութեր, ցուցակ, հավատարմագրման վկայականներ | 3 | 3 | 30/12/2022 |
| 39 | Զինապարտների հաշվառման, զորակոչի և վարժական հավաքների կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքներին օժանդակում | ընթացիկ | Զինապարտների հաշվառման, զորակոչի և վարժական հավաքների արդյունավետ կազմակերպում | Զինապարտների հաշվառման, զորակոչի և վարժական հավաքների կազմակերպման և անցկացման վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դրական գնահատականի առկայությունը | Որոշման նախագիծ, արձանագրություն, զեկուցագիր, գրություն | 2 | 2 | 30/12/2022 |
| 40 | Այլ ընթացիկ աշխատանքներ | ընթացիկ | x | x | x | 3 | 3 | 30/12/2022 |
| 41 | Չպլանավորված աշխատանքներ | ընթացիկ/ նպատակային | x | x | x | 3 | 3 | 30/12/2022 |
| NN | Փոփոխություններ աշխատանքներում | | | | | 100 | 100 | |
| | | | | | | | | |
| | Ընդամենը | | | | | | | |

* ներգրավված ինքնուրույն ստորաբաժանումները համարակալվում և ներկայացվում են հետևյալ օրինակով՝

| | |
|---|---|
| ստորաբաժանում 01 | Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն |
| ստորաբաժանում 02 | Քաղաքաշինության վարչություն |
| ստորաբաժանում 03 | Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն |
| ստորաբաժանում 04 | Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն |
| ստորաբաժանում 05 | Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն |
| ստորաբաժանում 06 | Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն |
| ստորաբաժանում 07 | Քարտուղարություն |

| | |
|---|---|
| ստորաբաժանում 08 | Իրավաբանական բաժին |
| ստորաբաժանում 09 | Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին |
| ստորաբաժանում 10 | Հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչություն |
| ստորաբաժանում 11 | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին |
| ստորաբաժանում 12 | Անձնակազմի կառավարման բաժին |
| ստորաբաժանում 13 | Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին |
| ստորաբաժանում 14 | Զորահավաքային նախապատրաստության բաժին |

Անմիջական ղեկավարի (գնահատողի) ստորագրությունը ..............................................................

*Անունը, հայրանունը, ազգանունը* ..............................................................

Պետական կառավարման մարմնի Գլխավոր քարտուղարի (գնահատվողի) ստորագրությունը ....................................

*Անունը, հայրանունը, ազգանունը* ..............................................................

| տը | I կիսամյակի | | II կիսամյակի | | Ներգրավված ռեսուրսները (ինքնուրույն ստորաբաժանումներ*) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրական | գնահ. | կշռվ. գնահ. | գնահ. | կշռվ. գնահ. | ընդամենը մ/օր | | գլխավոր քարտուղար | | գլխավոր քարտուղարի տեղակալ | | 01 | | 02 | | 03 | | 04 | | 05 | | 06 | | 07 | | 0 |
| | | | | | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրա-կան | պլան | իրա-կան | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | 1483 | | 7 | | 7 | | 160 | | 165 | | 114 | | 160 | | 180 | | 90 | | 122 | | 31 |
| | | | | | 166 | | 8 | | 8 | | 0 | | 150 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 134 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 122 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 190 | | 8 | | 8 | | 0 | | 0 | | 0 | | 174 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 186 | | 8 | | 8 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 170 | | 0 | | 0 | | 0 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 102 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 90 | | 0 | | 0 |
| | | | | | 60 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 72 | | 6 | | 6 | | 60 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 52 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 514 | | 7 | | 7 | | 170 | | 170 | | 0 | | 0 | | 160 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 182 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 170 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 192 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 180 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 1503 | | 5 | | 5 | | 176 | | 178 | | 114 | | 170 | | 170 | | 86 | | 122 | | 30 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 569 | | 7 | | 7 | | 132 | | 128 | | 0 | | 120 | | 146 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 456 | | 7 | | 7 | | 164 | | 164 | | 114 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 884 | | 5 | | 5 | | 170 | | 160 | | 114 | | 170 | | 170 | | 90 | | 0 | | 0 |
| | | | | | 172 | | 6 | | 6 | | 0 | | 160 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 126 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 114 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 126 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 114 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 126 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 114 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 406 | | 6 | | 6 | | 140 | | 0 | | 0 | | 0 | | 180 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 192 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 180 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 97 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 85 | | 0 | | 0 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 227 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 90 | | 125 | | 0 |
| | | | | | 1535 | | 7 | | 7 | | 180 | | 180 | | 116 | | 170 | | 180 | | 90 | | 122 | | 30 |
| | | | | | 135 | | 5 | | 5 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 125 | | 0 |
| | | | | | 138 | | 5 | | 5 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 128 | | 0 |
| | | | | | 1594 | | 5 | | 5 | | 190 | | 160 | | 128 | | 184 | | 190 | | 95 | | 128 | | 30 |
| | | | | | 132 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 90 | | 0 | | 30 |
| | | | | | 60 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 81 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 82 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 78 | | 4 | | 4 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 162 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 72 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 1603 | | 6 | | 6 | | 240 | | 155 | | 120 | | 186 | | 180 | | 92 | | 124 | | 30 |
| | | | | | 57 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 132 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 |
| | | | | | 171 | | 6 | | 6 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 92 | | 0 | | 0 |
| | | | | | 1902 | | 8 | | 8 | | 252 | | 258 | | 120 | | 178 | | 190 | | 144 | | 142 | | 37 |
| | | | | | 1883 | | 8 | | 8 | | 252 | | 258 | | 120 | | 170 | | 190 | | 136 | | 132 | | 36 |
| | | | | 0.00 | 18034 | | 254 | | 254 | | 2286 | | 2286 | | 1524 | | 2032 | | 2286 | | 1270 | | 1270 | | 254 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 09 | | 10 | | 11 | | 12 | | 13 | | 14 | |
| իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական |
| 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 |
| | | | | | | | | | | | | |
| | 44 | | 69 | | 140 | | 74 | | 60 | | 60 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 48 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 40 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 44 | | 69 | | 140 | | 74 | | 60 | | 60 | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 29 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 74 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 44 | | 69 | | 146 | | 74 | | 60 | | 60 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 54 | | 69 | | 162 | | 74 | | 60 | | 60 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 48 | | 0 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 69 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 70 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 70 | | 0 | | 0 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 150 | | 0 | | 0 | | 0 | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 0 | | 0 | | 0 | | 60 | | 0 | | 0 | |
| | 47 | | 69 | | 154 | | 74 | | 60 | | 60 | |
| | 0 | | 0 | | 0 | | 45 | | 0 | | 0 | |
| | 0 | | 0 | | 0 | | 0 | | 60 | | 60 | |
| | 0 | | 0 | | 0 | | 67 | | 0 | | 0 | |
| | 75 | | 106 | | 184 | | 76 | | 74 | | 50 | |
| | 75 | | 102 | | 194 | | 70 | | 74 | | 58 | |
| | 508 | | 762 | | 1270 | | 762 | | 508 | | 508 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

2022թ. փետրվարի 10

N 76-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԱՅԳԻՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆ ՄԵՋ «ԱՐԱԳԱԾՈՏՆ» ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1617-Ն որոշման հավելվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արա Սարգսյանի կողմից «Արագածոտնի այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրանցման նպատակով ֆիրմային անվանման մեջ «Արագածոտն» հատուկ անունն օգտագործելու համար վճարված պետական տուրքի անդորրագրի ներկայացման փաստն, ինչպես նաև նրա կողմից այդ նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան ներկայացված դիմումները և դրանցով ստանձնած հանձնառությունն առ այն, որ նշված անվանումով ընկերությունը պետական գրանցում ստանալուն պես նախատեսում է հիմնել 50 հեկտար ինտենսիվ խաղողի այգիներ և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում զբաղվել խաղողագործությամբ, ապա նաև գինեգործությամբ,

Որոշում եմ

1. Թույլատրել քաղաքացի Արա Սարգսյանին (անձնագիր AP0508396 տրված 012-ի կողմից 03.08.2016թ., սոցիալական քարտ 3307770179) օգտագործելու «Արագածոտն» հատուկը անունը՝ «Արագածոտնի այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պետական գրանցումը լիազոր մարմնում իրականացնելիս:
2. Սույն որոշման օրինակը տրամադրել Արա Սարգսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

X

VERIFIED OCSP 11.02.2022 11:01:01 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457 Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 77-Ա

15 02 2022թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ», «իդ» կետով, հաշվի առնելով «Աշտարակի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ ՓԲԸ) տնօրենի 14 փետրվարի 2022 թվականի ԱՀ-01/ Տ N 14-22 գրությունը,՝ որոշում եմ.

1. Հաստատել՝

   «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ 2021 թվականի՝

   1.1. ճշտված եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

   1.2. ճշտված հաստիքացուցակը համաձայն N2 հավելվածի

   1.3. ուժը կորցրած ճանաչել Արագածոտնի մարզպետի 26 ապրիլի 2021 թվականի N 85 որոշման N1 և N2 հավելվածները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

VERIFIED OCSP 14.02.2022 16:06:04 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2022թ. փետրվարի 16 -ին, N 78 -Ա**

**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 18-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1)«Կնյազյան Արշակ Միսակի» և «Հակոբյան Ռադիկ Գևորգի» բառերը համապատասխանաբար փոխարինել «Դատումյան Մերի Ռազմիկի» և «Թադևոսյան Ռազմիկ Սարգսի» բառերով:

2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 16.02.2022 10:44:39 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2022 թվականի N 79-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 26 քաղաքացիների հատկացնել 935000/ ինը հարյուր երեսունհինգ հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՏՏՀ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

VERIFIED OCSP 17.02.2022 14:29:08 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. Մովսիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2022թ. փետրվարի 17

N 81-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 102 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով ուղեգրող հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2021 թվականի մայիսի 19-ի N102 որոշման 2-րդ հավելվածը փոփոխել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշմանը կից հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 18.02.2022 15:31:47 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2022թ.
17-ը փետրվարի N 21-Ա որոշման

ԿԱԶՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇՏԱՐԱԿԻ, ԱՊԱՐԱՆԻ, ԹԱԼԻՆԻ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

## ԱՇՏԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Արգիշտի Հովհաննիսյան – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Աշտարակի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության տնօրեն \հանձնաժողովի նախագահ\

Արտավազդ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Աշտարակի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով փոխտնօրեն \հանձնաժողովի քարտուղար\

Կարինե Մինասյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Աշտարակի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն

Արմեն Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական

Մերի Շահազիզյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Կարեն Թաթուլյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ

Շուշանիկ Առուստամյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Աշտարակի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության տնօրենի օգնական ադմինիստրատիվ աշխատանքների գծով

## ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հայկ Շմավոնյան – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ապարանի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության տնօրեն \հանձնաժողովի նախագահ\

Մարգարիտա Աճեմյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ապարանի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով փոխտնօրեն

Աննա Մաթևոսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ապարանի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն \հանձնաժողովի քարտուղար\

Միլադա Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական

Սուսաննա Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի մասնագետ

Գևորգ Պապիկյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ապարանի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության իրավաբան

## ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Սարգիս Ավագյան – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Թալինի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության տնօրեն տնօրեն \հանձնաժողովի նախագահ\

Մարիամ Նազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Թալինի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն \հանձնաժողովի քարտուղար\

Աղավնի Աղեկյան – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Թալինի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության տեղամասային թերապևտ

Ռազմիկ Թադևոսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական

Տաթևիկ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ

Ռոզա Ֆահրադյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Թալինի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության համակարգչային օպերատոր

ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Արմեն Հակոբյան – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ծաղկահովիտի առողջության կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության տնօրեն \հանձնաժողովի նախագահ\

Ջիվան Սանոսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ծաղկահովիտի առողջության կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն \հանձնաժողովի քարտուղար\

Բիուզանդ Քահքէճեան – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ծաղկահովիտի առողջության կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության վիրաբույժ

Անահիտ Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ծաղկահովիտի առողջության կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության մանկաբույժ

Աստղիկ Էլբակյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի "Ծաղկահովիտի առողջության կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության դեղագետ

Մերի Դատումյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2022թ. փետրվարի 18

թիվ 82-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 17.12.2021 ԹՎԱԿԱՆԻ N 567 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը և հանրային իրազեկման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 17.12.2021 թվականի N 567 որոշման հավելվածում "Տ.Եղիազարյան-Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ" բառերը փոխարինել "Հ.Գևորգյան-Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար " բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 18.02.2022 15:14:14 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2022թ. փետրվարի 18-ին, N 83-Ա
ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 5-րդ կետով և 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Լ. Պետրոսյանի 2022 թվականի փետրվարի 17-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի փետրվարի 21-ից փետրվարի 25-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Վարդենուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիանա Պետրոսյանին տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Վարդենուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել տնօրենի տեղակալ Արա Պետրոսյանի վրա:

X

VERIFIED OCSP 21.02.2022 11:49:28 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

21 02 2022թ.

N 84-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 272 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հաշվի առնելով «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ ՓԲԸ) տնօրենի 25 հունվարի 2022 թվականի թիվ 20 գրությունը, որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Արագածոտնի մարզպետի 03 օգոստոսի 2021 թվականի N 272 որոշման N 1 հավելվածը
2. Հաստատել «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ 2021 թվականի՝ ճշտված եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն հավելվածի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվա հաջորդ օրվանից:

X

VERIFIED OCSP 21.02.2022 11:52:31 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Թ․ 13

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2022թ փետրվարի 21-ին, N 85-Ա**

**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սասունիկի միջնակարգ դպրոցի կառավարման առանձին խորհրդի անդամ Վ. Հարությունյանի 2022 թվականի փետրվարի 14-ի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 12-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «Հարությունյան Վաչիկ Սարգսի» բառերը փոխարինել «Դատումյան Մերի Ռազմիկի» բառերով:
2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 21.02.2022 11:22:45 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2021թ. փետրվարի 21-ին, N 86-Ա**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Նոր Եդեսիայի միջնակարգ և Շամիրամի հիմնական դպրոցների կառավարման միացյալ խորհրդի անդամ Վ. Հարությունյանի 2022 թվականի փետրվարի 14-ի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 8-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. <<Հարությունյան Վաչիկ Սարգսի>> բառերը փոխարինել <<Թադևոսյան Ռազմիկ Սարգսի>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 21.02.2022 16:29:48 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**2022թ փետրվարի 22-ին, N87-Ա**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ավշենի, Ջամշլուի հիմնական և Սիփանի միջնակարգ դպրոցների կառավարման միացյալ խորհրդի անդամ Վ. Հարությունյանի 2022 թվականի փետրվարի 14-ի դիմումը՝ որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Արագածի տարածաշրջանի 2-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.«Հարությունյան Վաչիկ Սարգսի» բառերը փոխարինել «Մովսիսյան Կարեն Մանվելի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 22.02.2022 10:11:47 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2022թ. փետրվարի 22-ին, N88-Ա

ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՏԵՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 5-րդ կետով և 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Վարուժան Հակոբյանի 2022 թվականի փետրվարի 22-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի փետրվարի 22-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արտենիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարուժան Հակոբյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 10 օրացուցային օր տևողությամբ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արտենիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ընտանեկան բժիշկ Զենֆիրա Փոչիկյանի վրա:

X

VERIFIED OCSP 23.02.2022 11:52:56 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

2022թ. փետրվարի 23-ին, N 89-Ա
ք. Աշտարակ

ՌՈՒԶԱՆՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՏԱՇԱՎԱՆԻ Գ. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արտաշավանի Գ. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2022 թվականի փետրվարի 18-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ռ. Մարտիրոսյանի 2022 թվականի փետրվարի 22-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ***.

Ռուզաննա Մարտիրոսյանին 2022 թվականի փետրվարի 23-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արտաշավանի Գ. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

X

VERIFIED OCSP 23.02.2022 16:30:09 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. փետրվարի 23-ին, N 90-Ա
ք. Աշտարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԾԱՐԾԱԿԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԹԵՐԵԶԱ ՍԱԴԵՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծարծակիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հռիփսիմե Ավետիսյանի կողմից ներկայացված БВ N 003799 անաշխատունակության թերթիկը և 2022 թվականի փետրվարի 22-ի դիմումը, ***որոշում եմ***.

2022 թվականի փետրվարի 22-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծարծակիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Թերեզա Սադեյանի վրա՝ մինչև հիմքի վերացումը:

X

VERIFIED OCSP 28.02.2022 09:30:10 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**2022թ. փետրվարի 28-ին, N 91 -Ա**
**ք. Աշտարակ**

## ԼԻԴԻՅԱ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՀԱԿՈՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

2022 թվականի փետրվարի 28-ից Լիդիյա Գրիգորյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Հակոյի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից՝ լուծելով 2019 թվականի հոկտեմբերի 15-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

X

VERIFIED OCSP 01.03.2022 12:52:42 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
# ՈՐՈՇՈՒՄ

**2022թ. փետրվարի 28-ին, N 92-Ա**
**ք. Աշտարակ**

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՆԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՀԱԿՈՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Հակոյի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2022 թվականի փետրվարի 23-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ս. Հակոբյանի 2022 թվականի փետրվարի 24-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

Սյուզաննա Վանիկի Հակոբյանին 2022 թվականի մարտի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Հակոյի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

X

VERIFIED OCSP 01.03.2022 12:54:00 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2022թ. փետրվարի 28

N 93-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 57-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 23-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 4-րդ մասով, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի հունիսի 8-ի «Գենդերային հարցերով զբաղվող մարզային մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 57-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 01.03.2022 15:07:04 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2022 թվականի սեպտեմբերի 28 N.914 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հ.Գույյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, /հանձնաժողովի նախագահ/,

Լ.Ղարիբյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, /հանձնաժողովի քարտուղար/,

Հանձնաժողովի անդամներ՝

Ռ.Նալբանդյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության կրթության բաժնի պետ,

Ա.Սարգսյան - Միասնական սոցիալական ծառայության Աշտարակի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Կ.Խաչատրյան - Միասնական սոցիալական ծառայության Ապարանի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Լ.Գրիգորյան - Միասնական սոցիալական ծառայության Թալինի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Ն.Անտոնյան - Միասնական սոցիալական ծառայության Ծաղկահովիտի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Ա.Մովսիսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանսոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ,

Ն.Դավթյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ բժիշկ,

Ա.Գասպարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մանկավարժ,

Ա.Աբգարյան - «Թալին Հույս» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ,

Ժ.Ավետիսյան - «Արայի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ,

Ռ.Հարությունյան – Վորլդ Վիժն Հայաստանի Ապարանի տարածքային գրասենյակի համակարգող, /համաձայնությամբ/:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ